ԲԱԼԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ

Գիտահանրամատչելի հանդես

Вестник архивов Армении

Научно-популярный журнал

Bulletin of Armenian Archives

Scientific practical journal

1 (113)
2009

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN

նի վիլայեթի մասին բանախոսությամբ հանդես եկավ Հ.Երամյանը:

Հ.Երամյանը, որը զուրկ էր տեսողությունից, կարողացավ հիշողությամբ ներկայացնել հարուստ տեղեկություններ Վանի վիլայեթի և մասնավորապես Վան քաղաքի ու նրա ազգաբնակչության տեղագրության, թվաքանակի, բնական հարստությունների, անասնապահության, արհեստների, հաղորդակցության, հարկերի, դատարանների, քաղաքապետության գործունեության, բանկերի, հյուպատոսությունների և կրթության մասին:[1] Տարբեր թեմաներով դասախոսություններ կարդացին նաև «Աշխատանք» թերթի խմբագիր Հմայակ Մանուկյանը,[2] դաշնակցականներ Քարմենը և Ա.Վռամյանը[3], հնչակյան Ա.Բրուտյանը, ռամկավար Ս.Դարբինյանը[4] և այլոք:

1910թ. վերջերին և 1911թ. գարնանը ամերիկահայ գաղութի նախաձեռնությամբ նշվեց «Արմենիա» թերթի խմբագիր, հրապարակագիր, ազգային և կրթական գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական գործունեության և «Արմենիա» թերթի հիմնադրության 25 ամյա հոբելյանը:[5] Ամերիկաբնակ վանեցիները սկզբում որոշել էին այն տոնել «Արմենիա» թերթի 25 ամյակի տոնակատարությունների ժամանակ՝ 1912թ.: Այդ նպատակով Վանում կազմվել էր հանձնաժողով, որը սակայն որոշում է տոնակատարությունը տեղափոխել 1913թ.՝ նշելու համար գործչի հասարակական գործունեության 40-ամյակի հետ միասին: 1913թ. հունվարին Վանի Երամյան վարժարանում մեծ հանդիսավորությամբ նշվեց այդ հոբելյանը:[6] Հետագայում, երբ 1914թ. մայիսին Մ. Փորթուգալյանի տոնակատարությունը նշվեց նաև Կ.Պոլսի, Բըթի-Շանի թատրոնում՝ պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի և Թալեաթ փաշայի մասնակցությամբ, Վանից որպես պատվիրակներ մասնակցեցին Հ.Երամյանը, Հ. և Փ.Թերլեմեզյանները:

Վան-Վասպուրականի մշակութային-քաղաքական կյանքում խոշոր իրադարձություն էր նաև թուրքերի կողմից Վանի գրավման 400-ամյակի տոնակատարության անցկացումը, որը պաշտոնապես և հանդիսավորությամբ կազմակերպվեց 1914թ. սեպտեմբերին Վանի նահանգապետ-կուսակալ Թահսին բեյի հովանավորությամբ:

Ավետիս Հարությունյան
պատմական դիտությունների
թեկնածու

[1] Կովկասի լրաբեր, Թիֆլիս, 1913թ. դեկտեմբերի 13, թիվ 279:
[2] «Աշխատանք»,Վան, 1915թ. հունիսի 20, թիվ 26-225, հունիսի 24, թիվ 27-226:
[3] «Հորիզոն», Թիֆլիս, 1913թ., հունվարի 10, թիվ 6:
[4] «Կոհակ», Կ.Պոլիս, 1912թ., ապրիլի 4/17, թիվ 13:
[5] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 74, թ. 1, «Մշակ», Թիֆլիս, 1911 թ. հունվարի 11, թիվ 4:
[6] Հ.Երամեան, Յուշարձան, հ. Բ, էջ 271-272:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ «ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային տարիներին կարծրացած այն միտքը, թե 1917թ. հետո բոլշևիկներն են եղել այն միակ քաղաքական ուժը, որին մտահոգել է հայերի ճակատագիրը և որ Դաշնակցությունն էլ լինելով իմպերիալիստական երկրների լրտես՝ հայությանը տարել է դեպի անդունդ, հօդս է ցնդել խորհրդային կարգերի փլուզումից հետո: Այսօր, երբ հասու են նախկինում արգելված արխիվային նյութերն ու գրականությունը, կարիք կա նորովի ուսումնասիրելու այս հարցը՝ դիտարկելով այն առանձնահատկությունները, որոնք առկա էին Դաշնակցության ու բոլշևիկների միջև հարաբերություններում:

1917-1918թթ. ընթացքում Դաշնակցությունը գնաց բոլշևիկների հետ համագործակցության, որի արդյունքում կողմերը մշակեցին «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, Թիֆլիսյան համաձայնագիրը*, համատեղ գործեցին նաև Բաքվի 1918թ. պաշտպանության ժամանակ և այլն: Անդրկովկասում, 1917-1918թթ. ընթացքում Դաշնակցությունը բոլշևիկների հետ հարաբերությունները գաղտնի էր պահում՝ միաժամանակ հարաբերություններ հաստատելով հակաբոլշևիկյան ուժերի հետ: Նման երկակի քաղաքականությունը պատմության մեջ հայտնի է «թիկունքային քաղաքականություն» անունով: Այս արտահայտության հեղինակը հայ մենշևիկ Արամայիս Երզնկյանն է: Նա առաջին անգամ հնչեցրել է այս արտահայտությունը 1917թ. սեպտեմբերի 29-ին՝ Թիֆլիսում բացված Հայոց Ազգային համախորհրդակցության հոկտեմբերի 6-ին կայացած նիստի ժամանակ: Երզնկյանը Դաշնակցությանը մեղադրում էր նրանում, որ նա վարում է «թիկունքային քաղաքականություն. մեկ կամ երեք նահանգ պահանջելով, նա (Դաշնակցությունը -Մ.Հ.) ուզում է հայկական տերիտորիա ստեղծել, որ շովինիզմ է»:[1] Ա.Երզնկյանը նման «մեղադրանքով» հանդես եկավ այն ժամանակ, երբ Դաշնակցության ներկայացուցիչ Շահխաթունին հայտարարեց, որ Անդրկովկասում հիմնական ազգությունները պետք է ընդգրկվեն ազգային պատկանելիության սկզբունքի հիման վրա ստեղծված նահանգներում, իսկ Թիֆլիսը այդ պարագայում չի կարող Անդրկովկասի կենտրոնը դառնալ: Դաշնակցության մոտեցումը պարզ էր, քանի որ Անդրկովկասյան միացյալ պետության գաղափարը նրան այնքան էլ չէր հրապուրում: Արևելյան Հայաստանն էլ Դաշնակցությունը պատկերացնում էր Ռուսաստանի կազմում՝ անկախ նրանից, թե ինչ ուժեր իշխանության կգային այստեղ: Պարզ էր նաև Երզնկյանի պոռթկումը: Վերջինս ուղղակի չէր կարող վրաց մենշևիկ «եղբայրների» քաղաքականությանը դեմ գնալ և ստանձնել էր սին «ինտերնացիոնալիստի» դեր: Դաշնակցության վարած «թիկունքային քաղաքականության» վերաբերյալ բացատրություններ է տալիս Ռուբենը. «Երեք դրութիւններ կային Ազգային Խորհուրդի եւ ղեկաւար կուսակցութեան՝ Դաշնակցութեան առջեւ:

Առաջինը՝ լինել Վրաստանի եւ Ադրբեջանի հետ՝ երեսը ուղղելով դէպի գերմանացիք եւ Թուրքիան.

Երկրորդը՝ դէմ լինել թուրքերին եւ հարեւաններին, յոյսեր կապելով Դաշնակիցնե- րի յաղթութեան վրայ.

Երրորդը՝ դէմ լինել ե՛ւ հարեւաններին, ե՛ւ Դաշնակիցներին, յենուել Մոսկուա-

* 1917թ. դեկտեմբերի 4-ից մինչև հունվարի վերջը Թիֆլիսում Դաշնակցության ներկայացուցիչների և բոլշևիկների միջև ընթացած բանակցությունների արդյունքում կնքված համաձայնագրով նախատեսվում էր, որ Անդրկովկասի խորհրդայնացման գործում բոլշևիկները ստանալով դաշնակների օժանդակությունը՝ ապահովելու էին հայերի ֆիզիկական անվտանգությունը, ընդունելու էին որպես ինքնավար մարզ Արևելյան Հայաստանը՝ Խորհրդային Ռուսաստանի կազմում և տալու էին Արևմտահայաստանին անկախություն:
Հայոց Ազգային համախորհրդակցության մասին տես Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993,էջ 34-53:

յում հիմնաւորուած բոլշեւիկների եւ Կովկասում մնացած նրանց բեկորների վրայ:

Այս երեք դրութիւնից եւ ո՛չ մէկը միանգամից չընդգրկուեց անվերապահ կերպով: Բայց փորձեր եղան երեք յենարաններից էլ օգտուել միաժամանակ: Թէ՛ կուսակցութեան մէջ եւ թէ Ազգային Խորհուրդում միատեսակ հասկացողութիւն չկար այս երեք դրութիւնից մէկն ու մէկը ընտրելու վճռական կերպով»[1]: Կողմնորոշվելու հարցում Դաշնակցության շարքերում գոյություն ունեցած տարաձայնությունները բնական էին, քանի որ քաղաքական այդ բարդ ու անընդհատ փոփոխվող ժամանակահատվածում անհնար էր անսխալ «խաղադրույք կատարել» այս կամ այն կողմի վրա: Անդրկովկասում ընդամենը մի քանի տարվա ընթացքում իրար էին փոխարինում գերմանա-թուրքական, անգլո-ամերիկյան և Խորհրդային Ռուսաստանի կողմերը: Ոչ ոք չէր կարող հստակ ասել, թե վաղը կողմերից որ մեկը կարող է թելադրողի դիրքում հանդես գալ: Դաշնակցությունը ելնելով այդ տրամաբանությունից՝ միաժամանակ երեք ուղղություններով էլ աշխատում էր: ՀՅԴ-ն գերմանական իշխանությունների հետ իր առաջին պաշտոնական բանակցությունները սկսեց 1918թ. ապրիլին, որոնք ընդհատումներով տևեցին մինչև մայիս: Այս բանակցությունները զուտ կուսակցական նախաձեռնություն չէին: Դրանց նախաձեռնողը Ազգային խորհուրդն էր, որի կազմած պատվիրակության մեջ մտնում էին երկու դաշնակցական՝ Արշակ Ջամալյանը, Լիպարիտ Նազարյանցը, և մեկ ներկայացուցիչ ժողովրդական կուսակցությունից՝ Գևորգ Մելիք-Դարագյոզյանը:[2] Հետաքրքիր է, որ այդ բանակցություններին մասնակցելու համար հայկական պատվիրակությանը օժանդակություն ցուցաբերեց բոլշևիկյան կողմը. Տրոցկու հավանությամբ, Կարախանի հրահանգով հայ պատվիրակները ազատվեցին Բեռլին անցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման քաշքշուկից3: Գերմանիայի հետ բանակցությունները հայկական կողմի համար որևիցե կոնկրետ արդյունք չապահովեցին: Այս բանակցություններին զուգահեռ Գերմանիան Կոստանդնուպոլսում 1918թ. ապրիլի 27-ին Թուրքիայի հետ կնքել էր Անդրկովկասում ազդեցության գոտիների հարցի շուրջ համաձայնություն, որով Թուրքիան նաև ստանում էր Հայաստանի մեծ մասը4: Սակայն անտեղյակ այս համաձայնությունից՝ Դաշնակցությունը հետագայում էլ շարունակում էր բանակցել գերմանական կողմի հետ՝ հույս ունենալով, որ վերջինս Թուրքիային կստիպի հրաժարվել հակահայկական քաղաքականությունից: Միաժամանակ Դաշնակցությունը փորձեր էր կատարում՝ ստանալու Անտանտի երկրների օժանդակությունը: Դեռ 1917թ. նոյեմբերի 9-ին Պետրոգրադում կազմավորված հայկական պատվիրակությունը, որի մեջ էր նաև դաշնակցական Հ. Զավրիևը, հանդիպումներ ունեցավ Ռուսաստանում գտնվող ֆրանսիական, անգլիական, ամերիկյան մի շարք պաշտոնյաների ու զինվորական առաքելությունների ղեկավարների հետ5: Նրանց հետ քննարկվող հիմնական հարցը արևելահայերին ու արևմտահայերին ցուցաբերվելիք հնարավոր օգնության մասին էր: Նշված երկրների լիազորված պաշտոնյաների պատասխանը ենթադրում էր, որ գոնե այդ ժամանակահատվածում իրենց երկրները չեն կարող ցուցաբերել հայերին անհրաժեշտ որևիցե օգնություն: Այսպիսով, մնում էր առաջին հերթին հույսը դնել սեփական ուժերի վրա և անկախ ամեն ինչից՝ փորձել լեզու գտնել բոլշևիկների հետ: Ինչն էլ Դաշնակցության շատ ներկայացուցիչներ ընդունելի էին համարում: Կային նաև այս տարբերակին հակառակվողներ: Ըստ Ռուբենի՝ դրանց թվում էին Անդրկովկասի սեյմի դաշնակցական ներկայացուցիչների մեծ մասը՝ Խ. Կարճիկյանի

[1] Ռուբէն,Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, Պէյրութ, 1979,էջ 138:
[2] Գերմանիայում հայկական պատվիրակության բանակցությունների մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 28, թ. 1-8:
[3] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 130, թ. 1-3:
[4] Г. Пипия, Германский империализм в Закавказье в 1910-1918гг., М., 978,с. 102:
[5] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 105, թ. 1-4:

գլխավորությամբ[1]: Արդյո՞ք այս դեպքում Դաշնակցության վարած քաղաքականությունը «թիկունքային» էր, թե՞ կուսակցությունը բաժանված էր տարբեր խմբերի, որոնցից ամեն մեկը իր համար ընդունելի քաղաքականությունն էր վարում: Մեր կարծիքով, Դաշնակցությունը, ելնելով «տեղային» պահանջներից, ուղղակի պարտադրված էր, բնական է՝ պայմանականորեն, անջատ խմբերով գործել և իրար հակասող քաղաքականություն վարել: Այստեղ արդեն մեծ դեր չէր խաղում քաղաքական հեռատեսությունը: Եթե հնարավոր լիներ ճշգրիտ կանխատեսել, ապա Դաշնակցությունը մեկ հստակ կողմնորոշում կունենար: Դեպքերի զարգացումներն էին, որ Դաշնակցությանը ստիպում էին այս կամ այն կողմնորոշումը բռնել: Մասնակից չլինելով տերությունների կուլիսային հարաբերություններին և շատ դեպքերում ուղղակի անտեղյակ լինելով դրանց արդյունքներից, Դաշնակցությունը ստիպված էր նման քաղաքականություն վարել՝ հուսալով, որ երեքից որևէ մեկը արդյունավետ կլինի: Չմոռանանք, որ երեք կողմերի միջև, մեղմ ասած, հակակրանք կար, որն էլ ստիպում էր կուսակցությանը երեք բանակցային գործընթացներից գոնե մեկը՝ բոլշևիկների հետ բանակցային գործընթացը, գաղտնի վարել և նույնիսկ ակնհայտ համագործակցել հակաբոլշևիկյան ուժերի հետ: Ամենայն հավանականությամբ Դաշնակցության շարքերում հակաբոլշևիկյան տրամադրությունները առանձին կուսակցականների սեփական կարծիքներից այն կողմ չէին գնում: Այն հարաբերությունները, որ ծավալվեցին «Թուրքահայաստանի մասին» դեկրետի մշակման, թիֆլիսյան բանակցությունների ու հետագայում էլ Բաքվի պաշտպանության, բեռլինյան ու մոսկովյան բանակցությունների փուլերում, չէին կարող զուտ մի քանի կուսակցականների մտահաղացում լինել: Դա, անկասկած, կուսակցության մտահաղացման արդյունք էր, իսկ այդ ժամանակահատվածում դրա իրականացման համար միակ ճիշտ գործելաոճը «թիկունքային քաղաքականությունն» էր: Այն ենթադրում էր, որ Դաշնակցությունը պետք է ձևականորեն Անդրկովկասի միացյալ կառավարությունում հակաբոլշևիկյան կողմնորոշում ցուցաբերեր ու միաժամանակ գաղտնի հարաբերություններ հաստատեր բոլշևիկների հետ: Նման գործելաոճը վերահաստատվեց Դաշնակցության ու բոլշևիկների միջև կնքված թիֆլիսյան համաձայնագրով: Սակայն այս քաղաքականությունը ուներ նաև իր բացասական կողմերը, որոնք դրսևորվեցին քիչ ավելի ուշ: Հայտնվելով արտաքին քաղաքական ծանր դրության մեջ՝ բոլշևիկները դեպքերի զարգացման այլ տարբերակ նախընտրեցին: Կնքելով Բրեստ-Լիտովսկի հաշտության խայտառակ պայմանագիրը՝ բոլշևիկները փորձեցին լուրջ զիջումների գնով պահպանել Ռուսաստանում իրենց իշխանությունը: Եվ քանի որ այդ զիջումներից մեկն էլ արվում էր ի վնաս հայերի՝ նրանք սկսեցին արդարանալ: Անդրկովկասում ստեղծված ծանր դրության պատասխանատվությունը նրանք դրեցին միայն տեղի ազգային կուսակցությունների, մեր դեպքում դաշնակցության ուսերին՝ ներկայացնելով իրենց միակ նվիրյալի դերում: Ստացվեց այնպես, որ բոլշևիկները սկսեցին մեղադրել Դաշնակցությանը իրենց դեմ վարած «թիկունքային քաղաքականության» մեջ՝ համարելով, որ նրանք իրականում համագործակցելու նպատակ էլ չեն ունեցել: Դաշնակներին սոցիալիզմի համակիրներից վերածելով իմպերիալիստական երկրների լրտեսների, բոլշևիկները կարծես մոռանում էին, որ իրենց միջև համագործակցությունը ոչ թե հիմնված էր ընդհանուր գաղափարների, այլ փոխադարձ շահերի վրա:

Մհեր Հովհաննիսյան

[1] Ռուբէն, նշվ. աշխ., է. հատոր, էջ 138:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Մանուկյան Գոհար - Ովքե՞ր են իմ նախնիները, երբ և որտե՞ղ են ապրել. ո՞վ եմ ես 169

Հարությունյան Երվանդ - Արխիվային գործի պատմությունը Հոլանդիայում և Բելգիայում 18-19-րդ դարերում .. 177

Մինասյան Հարություն - Օսմանյան պետության և բանակի բարձրաստիճան հայ բժիշկները 180

Հարությունյան Ավետիս - Մշակութային կյանքի զարթոնքը Վան-Վասպուրականում 1908-1914թթ. 188

Հովհաննիսյան Միհեր - Դաշնակցության «թիկունքային քաղաքականության» առանձնահատկությունները 195

Նարիմանյան Գեղանուշ - ԼՂԻՄ-ի արդյունաբերությունը հետպատերազմյան առաջին հնգամյակի տարիներին . 198

Զատիկյան Հովհաննես - Հայկական հարցը և ազգային զարթոնքը 1960-ական թվականներին 205

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

Հաշվետվություն «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2008թ. գործունեության 210

ԼՐԱՏՈՒ

Ցուցահանդեսներ, արխիվային ոլորտի կարևոր իրադարձություններ 214

СОДЕРЖАНИЕ

ПУБЛИКАЦИЯ ДОКУМЕНТОВ

Илья Торопицын - Деятельность Коммерц-коллегии по привлечению турецких армян к транзитной торговле через Астрахань (1726-1727гг.) 3

Саакян Рубен - Деятельность Армянского сельскохозяйственного товарищества Тифлиса в оказании помощи армянскому населению Алашкертской области 11

Наапетян Сусанна - Несколько фактов церковной деятельности магистра Месропа архиепископа Тер-Мовсисяна 27

Аветисян Маро - Один документ о деятельности Дипломатического Представительства РА в Германии 39

Казахецян Владимир - Материалы Чека-ГПУ, как источник изучения советской истории 47

Арутюнян Аваг - Из истории проектов "Кавказского дома" 57

Овсепян Эмма - Из переписки Аветика Исаакяна 82

Сукиасян Амо - Из истории изгнания армянства Карса (1922г.) 90

Мангасарян Вардитер - Поэт всех армян в мемуарах Вагана Тотовенца (к 140 летию Ованеса Туманяна)..... 97

Вирабян Аматуни - Об аресте членов правительства А.Оганджаняна 107

Бадалян Армен - Армянская община Алеппо в 1964-1985гг. 111

СТАТЬИ

Ованесян Сусанна - Дружба Ованеса Туманяна и мецената Пилипоса Вартазаряна 132

Арутюнян Генрих - Социально-экономические трудности и формы общественных протестов в Республике Армения в период 1919-1920гг. .. 140

Макарян Лилит - Открытие филиалов Комитета помощи Армении в 1921-1922 годах 146

Авакян Гоар - Микаел Пападжанян - председатель Французского филиала Комитета помощи Армении 155

Саргсян Айк - Начало и формирование дипломатических и межпарламентских отношений между Арменией и Великобританией (1991-1995г.) 163